al Ba'īt ibn Ḥalbas die Rede (vgl. Handes 40, 872). Ja'qūbī II, 594 erzählt von ihm, daß er die Landschaft *Maraaá* an sich gebracht hatte[13] und daß der Statthalter von *Aderbaiǧān*, *Ḥamdūjeh ibn 'Alī ibn al Faḍl as Sa'dī*, welcher, wie oben vermerkt, dem „die Waise" benannten Statthalter von Armenien nachfolgte, und dessen Statthalterschaft wohl ganz ans Ende von *al Mu'taṣims* Kalifat anzusetzen ist, ihn bekriegte und gefangen nach *Sāmarrā* abführte. *Ibn al Ba'īt* beklagte sich bei dem Kalifen über *Ḥamdūjeh*, worauf dieser in den Kerker geworfen, er selbst aber wieder auf freien Fuß gesetzt wurde. Es gelang dem *Ibn al Ba'īt*, nach *Marand* zurückzukehren, wo er sich offen gegen den Kalifen empörte. *Ṭabarī* III, 1380 setzt seine Rückkehr nach *Marand* ins Jahr 234 und berichtet, daß um diese Zeit Statthalter von *Aderbaiǧān Muḥammed ibn Ḥātim ibn Hartama* war, welcher nichts gegen den Rebellen ausrichten konnte. Der Kalif befreite darauf den *Ḥamdūjeh* aus seiner Haft und ernannte ihn zum Statthalter von *Aderbaiǧān*. *Ṭabarī* nennt noch mehrere andere Generäle, welche dem *Ḥamdūjeh*, der mit *Ibn al Ba'īt* auch nicht fertig werden konnte, zu Hilfe geschickt wurden. *Ja'qūbī* sagt, daß *Ḥamdūjeh* in diesem Kriege umkam und daß die Machtstellung des *Ibn al Ba'īt* immer mehr zunahm. Die Generäle, die gegen ihn geschickt wurden, hießen *Ja'qūbī* II, 594 zufolge, *Zīrek at Turkī* und *'Attāb ibn 'Attāb*[14], während die Statthalterschaft auf *Buǧā* den Jüngeren übertragen wurde. Endlich wurde *Ibn al Ba'īt* gefangen genommen und nach *Sāmarrā* gebracht. Nach *Ja'qūbī* geschah das im Jahre 235 und bald darauf soll er gestorben sein.

(Fortsetzung folgt.)

[13] *Balādurī* 330 zufolge, gehörte dieser Flecken schon seinem Großvater *Ḥalbas Abū 'l Ba'īt*, dessen Sohn *al Ba'īt* ihn befestigte, und diese Befestigungen wurden von *Ibn al Ba'īt* weiter ausgebaut. Der *'Iṣma*, von dem oben die Rede war, wird wohl den *Ibn al Ba'īt* zeitweilig aus *Marand* verdrängt und dieser sich dann dafür an ihm gerächt haben.

[14] *Ṭabarī* erwähnt an des letzteren statt einen *Amr ibn Saisal ibn Kāl*, welcher bei *Jaq'ūbī* fehlt.

ՍԵՒԱՆԱՅ ՎԱՆՔԸ

(Շարունակութիւն։)

Գ.

Դարեր շարունակ քաղաքակրթութեան ծառայող հայ ժողովուրդը պարսկա-տաճկական լծի տակ կարծես առժամապէս դադարել էր՝ սեփական մշակոյթի զարգացնելու աշխատանքից։ Ռուսական տիրապետութեան տակ մտնելուց յետոյ, նրա որոշ հատուածը իւր ֆիզիքականի, նիւթականի ապահովութիւնը ձեռք է բերում եւ սկսում թուլացած կուլտուրական աշխատանքը որոշ տեմպով առաջ տանել։ Կարծես կուլտուրայի ծարաւը նրան մի այժ է տալիս տասնամեակներում ձեռք բերելու՝ դարերով անուշադիր թողածը։

1836 թուի եկեղեցական կազմակերպութիւնը, որ տիրում էր ռուսահայ հատուածին, դառնում է ազգային ինքնորոյնութեան մի կանոնադրութիւն։ Հայ մտաւորականը աշխատում է այդ զուտ եկեղեցական կանոնադրութեան տալ նաեւ ազգային ինքնավարութեան գոյն, նրա յօդուածներում փնտրում դնում է կէտեր, որոնց հիման վրայ որ ազգային լեզուն ու գիրը առանց օտար, տիրող պետութեան միջամտութեան, կարող էր զարգացնել։ Թեմական ու ծխական դպրոցները, որ սկսում են կազմակերպուել՝ այդ թուից դառնում են ազգային եկեղեցական դպրոցներ։ Դպրոցները խալիֆայական, վանքական դրութիւնից ելնում են հետզհետէ եւ ստանում աշխարհիկ դպրոցների նկարագիր, բնականաբար զուտ վանական դպրոցները փակւում են։

Դպրոցներն աւարտող սերունդը դառնում է կորիզը հայ նոր կազմուող մտայիններին։ Եթէ ԺԹրդ դարու առաջին քառորդում մտայինները զերազանցապէս հայ հոգեւորականներից էին կազմուում, ապա նոյն դարու կէսից սկսում է առաջ գալ յատուկ հայ աշխարհիկ մտայինների դասը, որոնք իրենց իրենց կրթութիւնը աշխարհիկ դպրոցներում էին ստացել։

Աւելացնենք սրանց վրայ եւ Ռուսաստան պետական դպրոցներում սովորող հայ երիտասարդութիւնը եւ տեսնում ենք, որ յընթացս 25—30 տարեայ կազմուում է մտայնութեան մի դաս, որի մէջ աշխարհօրէն եւ աշխարհը ապրելը, եւրոպական գրականութեան ու գիտութեան հետեւելը գերակշռող տեղն է բռնում։

Հպատակ վոքր ժողովրդին հոգեբանօրէն յատուկ է իրենից ուժեղ ու քաղաքակրթուած ժողովրդի իշխանութեան տակ անցնելուց յետոյ, ամէն կերպ աշխատել նմանուել տիրող ժողովրդին, ընդօրինակել նրանից այն ամէնը, ինչ որ դիւրին է եւ արտաքին քաղաքակրթութեան վերաբերեալ։ Նիստ ու կացի, զգեստի, լեզուի, յարաբերութիւնների ձեւերը դիւրութեամբ նմանողութեան ճամբով ձեռք է բերում ու հպատակին տիրողից զատող անախորժ տարբերութիւնը նման դէպքում հեշտութեամբ վերանում է։ Իր գոյութեան ընթացքում հպատակելու վարժ հայ մարդը այդ նոյն հոգեբանութեանը պիտի հետեւէր, այդ պատմական անհրաժեշտութիւն էր։

Եւ յիրաւի 50ական թուականների հայ մարդը, այլեւս պարսկա-տաճկական կնիքից բաւական ազատագրուել էր։ Դիւղերում, խուլ անկիւններում դեռ կարելի էր տեսնել այդ դարեր տեւող տիրապետութեան հետքերը խօսքերի, բառերի եւ մի քանի ընտանեկան սովորութիւնների մէջ։

Մի կողմից կազմուում է աշխարհիկ մտայինների դաս, որոնց մէջ ոչն տուողը լինում են հիւսիսում, Ռուսաստանի բարձրագոյն կրթարաններում եւ Դորպատի գերմանական ազով գործող համալսարանում սովորողները, միւս կողմից ժողովուրդը արագութեամբ ընդօրինակում է ռուսական կենցաղի ձեւերը, եւ ռուս իշխանութիւնն իր հերթին, իր բազմաթիւ պաշտօնեաներով եւ պետական հիմնարկութիւններով տարածում է իր քաղաքակրթութիւնը եւ ռուսական ազդեցութիւնն ուժեղացնում. ռուսացումը սասկանում է։

Եթէ էջմիածնում կազմուած Սինոդի անդամներից ոմանք իրենց ազգանուան ռուսական վերջաւորութիւն են տալիս, եթէ Սինոդում գործավարութիւնը ռուսերէն է լինում սկզբի տարիներում, ի՞նչ զարմանք, որ հայ գիւղացին էլ նոյնն անէր եւ հայ մտայինը, հայ քաղաքէնին, գիւղից քաղաք գնալով քաղաքավարի դարձածը, աւելի եւս մեծ չափով դրան հետեւէր։

Այս հոսանքների ազդեցութիւնների հետեւանքն այն է լինում, որ առաջ է գալիս հայ քաղքենիութեան հոսանքն ընդհանրապէս։ Քաղքենի մտածմունքը, ըմբռնումը, ապրուստը, աշխարհահայեացքը իր անկուլտուր դրութիւնից կուլտուրականին անցնելու մի շրջան է։ քանզող հինը, առանց նորը չունենալու։ քննադատող ամէն ինչ ձեւի՝ եւ ոչ բովանդակութեան տեսակէտից։ Նիւթական կուլտուրայի երկրպագու, հոգեկան կուլտուրայի զարգացման աշխատանքից խուսափող։

Այս հոսանքը 50ական թուականներից սկսում է եւ շարունակում հետզհետէ ուժեղանալ մանաւանդ 70—80ական թուերին։

Հայ վանքն ու անապատը այլ եւս ի վիճակի չեն լինում իրենց ձեռքում պահելու մտային զարգացման դէկը։ այդ անցնում է աշխարհիկ կրթուածներին եւ նրանք հետզհետէ խամրում թաշնում են ու դառնում միայն նիւթականի համար ապրողներ, միայն պատմական յիշատակարաններ կամ զուտ սրբավայրեր, ուր հետաքրքիր ճանապարհորդը, կամ ջերմեռանդ աղօթարարը ի՛երթայ տեսնելու անցեալի մնացորդները։ Հայ վանքի ու անապատի համար սկսում է մի նոր շրջան, շրջան անկման ու հետզհետէ պատմութեան դիրքն անցնելու, որովհետեւ հոգեպէս, մտաւորապէս ապրողներ այլ եւս գրեթէ չեն մտնում վանքեր, ուր մնաց անապատները։ Աշխարհիկ գիրն ու գրականութիւնը նոր հոսանքի՝ գրաւել էր բոլորին։ վանքում մնում են առաւելապէս նիւթական կենցաղի հոգսին յանձնուածներ, որոնց համար գիտութեամբ, կրօնական ջերմեռանդութեամբ ապրել պահանջ չէր։

Մամուլը՝ հասարակական կարծիքը տարածողը եւ զատաբակողը, որ անծանօթ էր ԺԸ։ դարու հային, ԺԹ։ դարու կէսից սկսում է դեր խաղալ եւ դառնալ կօնդրօլ բոլոր հասարակական հիմնարկութիւնների, ի թիւս որոնց եւ հայ եկեղեցու, վանքի, անապատի վրայ։ Անծանօթ, անախորժ երեւոյթ էր դա հայ նախկին մտայնութեան տէր մարդկանց համար, բայց ոտիպուեցան վարժուել[20]։

Այդ նոյն մամուլի, նորակազմ քաղքենիների հայ մտայինների ազդեցութեան տակ վանական կեանքն էլ սկսում է յարմարուել որոշ խնդիրներում նրանց պահանջներին։ Նախ նահապետական մեծ օջախը՝ հայ վանքը, ուր հաշիւը, կշիռը, հաշուե-

[20] Մուրացան, Ամբեալը 226—273 եր։

© National Library of Armenia

ություն չկար, ընկնում է չափ ու ձեւի տակ. քաղաքի կեանքը պահանջում էր այդ ձեւը: Երկրորդ վանքերում փորձ է լինում ունենալու դպրոցներ պատրաստելու կրթուած հոգեւորականներ, սակայն դրսի ոյժը շատ էր հրապուրիչ, ուժեղ, որ վանական խուցն այլ եւս ի վիճակի լինէր դիմադրել դրան: Երրորդ — աշակերտը այժմ ուսուցչի դեր էր ստանձնել — աշխարհիկն էր իր գիտութեամբ ու պատրաստութեամբ բարձրը, հոգեւորականը նրան էր լսում ու նրանից ոպասում նորութիւն:

Այս անցումը՝ նահապետական վիճակից ու տնտեսութիւնից քաղքենականին ռուսահայ հատուածում դժուարութիւններ, անվարժութիւններ շատ շառաջացրեց. միայն դրաբարեան – աշխարհաբարեան հոսանքները ի զուր դիմադրաւեցին մի փոքր ժամանակ. ապա ազատամիտ ու պահպանողական հոսանքներն առաջ եկան, որոնք սկսեցին նահապետական ազգային – եկեղեցական եւ նորաշխարհիկ — քաղքենական – ազգային պայքարը, ուր բնականաբար անձնական հաշուէյարդարը խոշոր տեղ բռնեց: Հայ վանքը, հոգեւորականը այդ պայքարում գործոն դեր չկատարեց, այլ միայն սրան կամ նրան յարող եղաւ: Նա չունէր պատրաստութիւն, ներքին կազմակերպութիւն եւ հանգչող՝ կանթեղները մարող վանքերի նման ինքն էլ սկսեց կազմալուծուել ու ոգեսպառ լինել: Այս շրջանում Սեւանի անապատը վանք դարձաւ, այսինքն աշխարհին մօտեցաւ ու աշխարհօրէն ապրելու կենցաղը ընդգրկեց:

Դ.

Ներսէս Ե. Կաթողիկոսը, որ մինչեւ հայրապետական գահը բարձրանալը խոշոր դեր էր խաղացել ռուսահայ հատուածի քաղաքական ու եկեղեցական շարքերում, ամենայն հայոց հայրապետ ընտրուելով մի նոր շրջան է սկսում եկեղեցու վարչական–տնտեսական կազմակերպութեան, հեռու մնալով քաղաքական գործերի մասնակցելուց:

Երեք կարեւոր փոփոխութիւն է նա մացնում եկեղեցիների եւ վանքերի վարչութեան մէջ: Նախ աշխարհական «վէքիլ» վերահսկիչներ է նշանակում մի քանի տեղեր, չվստահելով հոգեւորականներին. երբ կրորդ հոգեւոր հաստատութիւնների, վանքերի տնտեսութիւնները հաշիւների տակ է դնում եւեմտից ու ծախուց արդեանց մատեաններ է մացնել տալիս. երրորդ մտցնում է վարչական – ժողովական սկզբունքը:

Առաջներում վանքը կամ անապատը մի մեծ օջախ էր, նահապետական մի տուն, ուր տան գլուխը վանահայրը ամէն եւեմուտքի բացարձակ տէր ու տնօրէնն էր, ամէն ինչ նրան էր ենթարկւում. եւ ինչպէս նահապետական տան մէջ հաշուի մատեան գոհութիւն չունէր, նոյնը եւ վանքում ու անապատում: Այժմ այս կարգերն փոխում են, աշխարհիկ տարրի հսկողութիւնն է մացնում. կոլեգիալ վարչութեան եղանակը եւ հաշուապահութեան սկզբունքը:

Սեւանայ անապատը, իբր մեծ վանք ուշադրութեան է առնում Ներսէս Ե.ը եւ կարգաւորում է այն եւս այդ սկզբունքների հիման վրայ:

Բնական է, որ ազօթաւոր ճգնազգեացների կեանքի մէջ հաշիւն ու չափը մտնէ, երբ հաշուառութեան ու հաշուէտուութեան սկզբունքը գործադրւում էր այլ եւս անապատականի միամիտ կենցաղը պիտի յեղաշրջուէր. երբ նա հաշուի մէջ պիտի խառնուէր այլ եւս նրա հոգին պիտի պղտորուէր հարազատ եւ անհարազատ վերաբերմունք ունենալու ցանկութիւններով: Սեւանի անապատականը սովոր էր հացն իսկ արհամարհել կամ միայն հացով բաւականանալ ԺԹ. դարու սկզբում. այժմ ԺԹ. դարու երկրորդ կիսում նրան ուտեստի, դրամի հաշուի պահող են դարձնում. ճգնաւորական տարրը — աշխարհինը եւ աշխարհայինը ուշադրութեան չառնելը, հանում է մէջ տեղից: Բնականաբար մեծ–օջախ անապատը դառնում է եւեմտական հաշուապահական հիմնարկութիւն ու անապատը կորցնում է իւր հմայքը եւ խոշոր բարոյական ազդեցութիւնը: Դուրսը – աշխարհը փոխուել էր եւ այդ դուրսը իր կարգերը թելադրում եւ մտցնում էր եկեղեցու, վանքի, հոգեւորականութեան մէջ: Նկատեմ եւ այն, որ Սեւանը 1836 թուից յետոյ դադարել էր անկախ թեմ լինելուց եւ դարձել էր մի սոսկ վանք իւր կալուածքների եկամուտներով պահուող. այլ եւս ժողովրդից պտղի, հոգեբաժին, ծխահարկ չէր ստանում: Էջմիածնի սինոդն էր նրա հոգիներին հսկողը,

նրա եւեմուտքը քննողը, մի օտար տարր եւս խառնում էր անապատի գործերին: Ազատ անկախ — ինքնօրէն անապատը դառնում էր ենթակայ, ստորադաս եւ մի այլ հիմնարկութեան հրահանգներով ղեկավարուող վանք: Խախտում է հայ վանքի սկզբունքը – ինքնօրէն կառավարուելու հին կանոնը. ռուս իշխանութիւնը կողմնակի ճանապարհով հայ ժողովրդի բարոյական–գիտական հիմնարկութիւնները իւր հսկողութեան տակ է առնում. օտար ձեւեր, կարգեր մտցնում եւ նպաստում ժամանակի հոսանքի հետ, որ այդ հիմնարկութիւնները թուլանան ու հանդչին, ինչպէս եւ հանդան վերջի վերջոյ:

1846 Հոկտ. 22ին Թ. 295 կոնդակով Ներսէս Ե.ը նշանակում է Սեւանայ մշտընջենաւոր վանահայր Յովհաննէս Վ.ին եւ սրան գործակիցներ վանքը կառավարելու համար Գալուստ սարկաւագ Տրդատեանին եւ մղտեսի Յակոբին. տալիս է հետեւեալ հրահանգը՝ միաբանների եւ վանքի կառավարութեան համար [21]. ա. Ձեր այսն՝ այո՛ լինի եւ ոչն՝ ո՛չ. բ. կրօնաւորները իրար պարտաւոր են չահել եւ համեստ կենցաղավարութիւն ունենալ. գ. ուխտաղրուժ չլինին. դ. լինին հեզ խոնարհ եւ միմիանց կարեկից. ե. անհարազատ չլինին դէպի Սեւանի սրբէ իրը. զ. եկամուտներն իսկոյն գրեն ժապաւինեալ մատեանում. է. ուխտաւորներին լաւ ընդունեն. ը. շարժական եւ անշարժ կայքի նոր ցուցակ կազմեն. թ. կերակրի նիւթերը, անասունների թիւը նշանակեն ցուցակում. ժ. շարժական իրերի համար ունենան առանձին մատեան, անշարժի համար առանձին, պատճեններն պահեն իրենց մօտ, իսկականներն ուղարկեն Սինոդ Ս. Էջմիածին:

1856 թ. Սեպտ. 4ին Տփխիսից տուած կոնդակով Ներսէս Ե.ը ընդարձակ հրահանգ է տալիս այն ժամանակուայ վանահայր Մկրտիչ Վ.ին, անապատի միաբաններ Յարութիւն Վ. Մարգանեանին, Կարապետ Վ. Բիւլբիւլեանի եւ նորընծայ Յովսէփ աբեղային, որ միասին 4ով կառավարեն վանքի թէ ներքին եւ թէ արտաքին գործերը. տարաձայնութեան դէպքում դիմեն Նոր–Բայազիտցի Բարսեղ ագա Արծրունուն, որին նա նոյն թուի Յունիսի 28ին Թ. 393 կոնդակով վէքիլ էր նշանակել Նոր–Բայազիտի շրջանի եկեղեցիների նաեւ Սեւանի անապատի:

Ահա այդ հրահանգը ամբողջապէս, որից որոշ երեւում է, թէ ո՛րքան անապատականը կշռի ու հաշուի տակ է առնում, ի՛նչպէս նրա ուշքը եւ միտքը կենդրոնացւում է տնտեսական խնդիրների վրայ եւ նրա վրայ ծանրանում է մեծ պատասխանատուութիւն, մի հանդամանք, որ անապատականի հոգին պիտի նիւթականի հետ կապէր, նրան ազատ ազօթարար լինելուց դարձներ մի պաշտօնեայ – չինովնիկ, որին միշտ կարող են դատապարտել. այն ժամանակուայ ահարկու եւ տրուզ պաշտօնեաների համար ամենազօր Սինոդի առաջ: Էլ ո՛ւր կը մնար երկրի վրայ երկնայինը ապրելու պահանջը եւ հնարաւորութիւնը:

1. Զամենայն եկամուտ վանքին թէ յիւրաքանչիւր գիւղօրէից կամ ի գիւղական ժողովրդոց եւ թէ ի ջրաղացած կամ յայդեաց եւ կամ յայլ կալուածոյ եղելոց, ուր եւ իցեն գրել յատուկ յատուկ զամենայն արդիւնսն, թէ դրամական եւ թէ որպիսի եւ իցէ նիւթեղէն գրել անուամբ տուողացն պայնս եւ որքանութիւն թուոց կամ կշռոց կամ դրամական գումարաց:

2. Պատուիրել նոյնպէս, զի եւ ամենայն օրական նուիրանսն ուխտաւորաց եկաւորաց ի վանսն, թէ շատ եւ սակաւ ի նմին աւուր գրել ի հաշուէմատեանի եւ պատրաստել զմի գանձանակ, արժանաւոր ամուր փականօք եւ զամենայն զգումար նուիրանաց արկանել յայն գանձանակ եւ ի չարաթն մի անգամ բանալ եւ համեմատութեամբ նշանակելոցն ի հաշուէմատեանն ստուգել եւ պահպանել որպէս եւ անկասկածելի համարել ունիցին: Որոյ ազազաւ տնօրինեցաք, ըստ յայծղելոյ Աստուծոյ թէ որպէս պարտ իցէ մատակարարել զայնոսիկ նուիրանսն ուխտիդ ի բարպաշտ նուիրողաց:

3. Նոյնպէս եւ զամենայն օրական ծախս գրել ի հաշուէմատեանի նշանակութեամբ անուանց եւ չափուց կամ կշռոց իրացն գնելոցն եւ որքանութեանց գնոյն իւրաքանչիւրաց:

4. Զամենայն զգումար տարեկան արդեանց վերահասութեամբ չորից վարդապետացն ի հաշուէմատեանին օրական ի լրման տարւոյն կամ ի վեց ամիս իւրաքանչիւր տեսակ արդեանց առանձին առանձին հաւաքել զգումարսն եւ գրել ի ժապաւինեալ

[21] Համառօտում եմ գրաբար բնագրից:

© National Library of Armenia

սումարին տուեցելոց ինքեանց ի սինոդէ էջմիածնի։ Եւ յառաքելն ի սինոդն զայն ժապաւինեալ հաշուէմատեանն, ունել առ ինքեանս մշտնջենաւոր ժամանակաւ զիւրեան օրական եկամտից հաշուէմատեանն։

5. Զո՛ ոք ի միաբանից անապատին վանահայրն եւ երեք խորհրդակիցքն միաբան արժանաւորութեամբ ունիցին պարտաւորել իւրեանց յատուկ պատուիրանաւ, զի յումմէ զինչ ստանալ ունիցի զրեսցի ի միում հաշուագրի ի ներքոյ իւրաքանչիւր աւուր ամսաթուոյ հանդերձ անուամբ տուողացն տրեցեալ նիւթոցն, հանդերձ որքանութեամբ կշռելի իրաց կշռոցն եւ չափելի իրաց չափոցն եւ համարելի իրաց քանիօքն, զի ըստ այնոցիկ կարող լինիցին որոշել վասն գրեցելոցն ճշմարտութեամբ կամ ոչ ճշմարտութեամբ եւ ճանաչել զհարպատոն վանիցն եւ եղբարց միաբանութեան։

6. Պատուիրել չորից վանական կառավարչացն ոչ ընկալնուլ ի միաբանութիւն անապատին առանց արժանաւորն վերաքննութեանց վարուց եւ բարուց որպիսաբար կենցաղավարութեանցն ի միջի ժողովրդեան ըստ որոց կենցաղավարեալ է ցայն ժամանակ յօժարելոց իւրոց մտանել ի միաբանութիւն անապատին, զի բազում են յոյժ անարժան վարուք եւ բարուք մտանողքն ի վանորայս, անօգուտ հոգւոյ իւրեանց եւ սրբութեանց ուխտին եւ վնասակար խռովարարութեամբ եւ զանազան անարժան վարուք։ Նաեւ որք մտեալ լինիցին ի յանապատն եւ լիցին հանգիստ վարուք եւ ջերմեռանդ առ իւրեանց կրօնաւորութեան եւ խցեն խռովարար եւ խառնակիչ վարուք, ունիցին իրաւունք վանահայրն եւ խորհրդակիցք իւրեան արտաքս վարել զայնպիսիս եւ զրկել ի միաբանութեանց սրբոց անապատին զամենայն աշխարհական միաբանեալսն. իսկ հոգեւորականացն եղելոց այնպիսի անարժան վարուք յայտնելով սինոդին էջմիածնի վասն որպիսաբար անարժան վարուցն եւ անհանգիստ կենցաղավարութեանցն սինոդական արժանադատութեամբ այնպէս զրկել ի միաբանութեանց անապատին Սեւանայ եւ առաքել յայլ վանորայս, ուր արժան դատել լինիցի։

7. Զբաղացք եւ այդիք անապատին եւ այլ մասնաւոր վարելահողք կամ տունք կամ խանութք ոչ վանահայր եւ ոչ խորհրդական երեք վարդապետքն առանց քանի աստուածասէր անձանց խորհրդակցութեան, եւ առանց համաձայնութեան ձերում ազնուականութեան (Բարսեղ աղա Արծրունու) չունիցին զիրաւունս տալոյ տարեկան նշանակեալ վարձօք ում եւ լցէ։ Իսկ վասն կիւղօրէից անապատին յանձն առնեմք ձերում ազնուականութեան, զի դուք նախ խորհրդակցութեամբ ընդ գիւղականաց ընակչաց ի գիւղօրայս անապատին լինել կշռադատ այնպէս, զի տուրք ժողովրդեան չունիցին համարել ոչ զրկանք իւրեանց եւ ոչ զրկանք վանիցն, այլ հանճարաւոր արժանադատութեամբ նշանակել վասն իւրաքանչիւրից սերմանեաց ցորենոյ, գարւոյ եւ այլ որոց եւ լցէ սերմանեաց եւ վասն գլխահարկաց եւ տնահարկաց եւ իւղոյ եւ պանրոյ ի գոմշոց, ի կովուց եւ յոչխարաց այնպէս, որպէս եւ որքան դատել ունիցիք համաձայնութեամբ բարեպաշտ գիւղականաց անապատին եւ այնպիսի ժամանակի ստանալոյ զման անապատին ի նշանակելոցն իւրաքանչիւրաց կարգել զմին ի քահանայից եւ զմի կամ զերկու ժողովրդականաց բարեյոյս անձանց, եւ յանձնելոյ նոցա գհաշուացուցակն վասն նշանակեցեալ նիւթեղինացն կամ գրամական տրոց ստորագրելոց ի ձեր ազնուականութեանց եւ ի ձերոց խորհրդակցաց եւ վանահօր եւ նորին խորհրդակից կառավարչացն անապատի։

8. Եւ ի վերայ այսօրիկ եօթն հատուածով նշանակեցելոցն ի մէջն ութերորդ եւս ամք ձեզ զայս մեր արժանադատութիւն, զի ընդ ձերոց խորհրդականաց եւ ընդ վանահօրն եւ նորին խորհրդակից երից վարդապետացն արժանապէս խորհրդակցութեամբ եւ բարուք կշռադատութեամբ որպէս եւ ունիցիք դուք ճանաչել արդար եւ ստուգածահաճոյ այնպէս մանրագնին հանդամանօք որպէս եւ ունիցիք արժանաւորել եւ վճռահատել վասն իւրաքանչիւր արոցն ի ընակչաց գիւղօրէիցն անապատի ի ծանուցանել մեզ ձերով գրութեամբ ձերում խորհրդականաց ստորագրութեամբ մեք եւս ըստ մերում մտահատութեանց հասու եղեալ որպիսութեանց ձերում արժանաւորութեանց եթէ երեւիլ ունիցին մեզ կամ սինոդին էջմիածնի թերութիւն ինչ, յայտնեսցուք ձերում խորհրդակից միաբանութեանց, իսկ եթէ զոցին առանց ինչ թերութեանց հաստատեսցուք եւ մեք եւ սինոդն էջմիածնի զձեր տնօրէնութիւն, վասն որքան ժամանակ դատել լինիցի։

Կաթողիկոս ամենայն Հայոց Ներսէս։

Կաթողիկոսի կոնդակը ցոյց է տալիս, թէ Սեւանայ անապատում ինչպէս միաբանութեան կենցաղը եւ աշխարհահայեացքը փոխուել էր. որ այն տեղ նիւթական շահով տարուողներ շատ կային, որ անհարազատ վերաբերմունք կար դէպի վանքի եկամուտը եւ որ հոգեկան կեանքով ապրելու պահանջից հեռացող, բարոյական սկզբունքները թուլացրած այդ միաբանութիւնը պարփակուելով մի փոքրիկ կղզում, դրսի շփումից հեռու լինելով, բնականաբար բամբասանքի, կաղ ու կռուի մէջ էր ապրում. եւ շատ էր հեռացել իր հիմնադրի ուսմունքներից։ Հայ շրջապատը այդ էր թելադրել անապատին, հայ գիւղացին նոր նոր էր սկսում կուլտուրական կենդրոնի հետ շփուել. նա մեծ չափով դեռ իր օդայում էր իր մտաւոր սնունդը գտնում։ Իսկ այդ սնունդը բամբասանք, խծբծանքն էր, գծուծ հաշիւը, կոպէգի պաշտամունքը։ Այդ ամէնը ներս էր տանում հայ մարդը Սեւան ու անապատականը նոյնն էր կրկնում. անապատը դրսի մի կտորն էր։ Կաթողիկոսը կոնդակով ուզում էր դրսի ազդեցութիւնը կտրել, հեռացնել մենաստանէն, չենթադրելով թէ այդ դուրսը հեղեղ է, որը ոչ թէ թղթերը, այլ եւ ժայռերը կարող է եւ կորվէ իր առաջից։

Սինոդի միջամտութիւնը վանական գործերում անցանկալի է համարուել բոլոր վանահայրերի կողմից. նոյնը եղել է եւ Սեւանայ անապատում։ Վանահայր Մկրտիչ Վ.ը 1850 թ. Յուլիսի 17ին դիմել է կաթողիկոսին, որ Սեւանայ անապատը հանէ սինոդի հսկողութիւնից. այդ օտար տարրի հսկողութիւնը եղել է օրէնքի եւ տառակիրութեան կնիք ունեցող յաճախ, ուստի եւ անապատը, ինքնօրէն կառավարուող մարմինը բողոքել է բիւրոկրատիկ միահեծանութեան դէմ. սակայն Ներսէս կաթողիկոսը անհետեւանք է թողուցել անապատի բողոքը, իսկ սինոդը լսելով այս յանդիմանել է վանահօրը, որ համարձակել է վեհափառին դիմել. ապա աւելացնում է. «Սինոդս զոլով ծայրագոյն ատեան, ուրեմն եւ հոգատար ամենայն հարկաւորացն վասն ենթադրեալ իւրում տեսչութեան վանօրէից եւ եկեղեցեաց...» կարգադրում է չվստահանալ այլ եւս նման խնդրով դիմել կաթողիկոսին։

Օտար պետութեան նշանակած սինոդը, ընդդիմանում էր իւր հարազատ վանքի ինքնօրէն լինելու պատմական ձգտման։ Հայ վանքը զրկուելով իր իրաւունքից դառնում է սինոդի իշխանութեան գերի. իսկ ազատութիւնը կորցնող մարմինը բնականաբար կամ կը փակուի կամ կ'ապրի կիսլանջ, ինչպէս Ի. դարի սկզբի մեր վանօրէյի վիճակն էր ցոյց տալիս։ Տիրող ոուս իշխանութիւնը բիւրոկրատ միապետական էր, կենդրոնացնող ամէն ինչ, հայ ժողովուրդը, նրա հետ եւ հայ եկեղեցին պէտք է յարմարուէր դրան եւ հայ մտային–քաղքենին թելադրում էր իր ազգային մեծ հիմնարկութեան նոյն բիւրոկրատացումը հոգեւոր դասը այդ թելադրանքը լսում էր։

Հասկնալու համար Ներսէս Կաթողիկոսի յիշեալ գրաբար հրահանգը, այն կշիռն ու չափը, այն գլխահարկն ու պտղին, որ նա հրահանգում է չափել, կշռել ու համարել, հարկաւոր է ծանօթանալ այդ ժամանակուայ Սեւանայ անապատի եկամուտների, նրանց տեսակների հետ։ Անապատի գիւանում եղած հաշուէմատեաններից քաղելով գնում եմ ստորեւ այդ հաշիւներից նմոյշներ, որը ցոյց կը տայ եւ միաբանութեան ապրուստի ինչ լինելը եւ թէ ինչ կալուածներ, եկամուտներ ունէր անապատը, որ այդպիսի հրահանգ տուեց Ներսէս կաթողիկոսը։

Օրինակ 1856 թ.ի հաշուէմատեաններից երեւում է

Սեւանայ մենաստանի կալուածներն են. — Ցամաքաբերդ, Գոմաճոր գիւղերը, Տփխիսում 1 սենեակ, 4 կրպակ. Երեւան 1 կրպակ, Նոր–Բայազիտ 2 ջրաղաց. Զըրչու 1 ջրաղաց. Երեւան 1 այգի, Քարավանսարա 1 այգի փոքր։ Ցամաքաբերդ եւ Գոմաճոր գիւղերից ստանում են գլխահարկ, միւս կալուածները տրւում են վարձով այս ու այն մարդկանց։

Ցամաքաբերդից ստանում են — ցորեն՝ 2 խալաստ, գարի՝ 4 խալաստ, հաճար՝ 50 լիտր 4 (լիտրը = 12 գրվանքայ), կտաւատ՝ 35 լիտր։,

Գոմաճորից ցորեն՝ 3 խ. 35 լ., գարի՝ 5 խ. 73 լ., հաճար՝ 70 լ։

Ուխտաւորներից մուտք 179 ռ. 70 կ., վաճառուած ցորենից եւ գարուց 65 ռ. 14 կ.

© National Library of Armenia

Մ. Աթոռի գանձարանից՝ 70 ռ., վաճառած անասնեղէնից՝ 44 ռ. 70 կ. եւ այլն, ընդ ամենայն 476 ռ. 54 կ. — ծախք 707 ռ. $59^1/_2$ կ.:

Մի արջառը ծախում են 5 ռ., 8 մողին՝ 18 ռ., մի կովը՝ 7 ռ., մի հորթը՝ 60 կ., գառը՝ 40 կ.:

Ելքն է միաբանից սնունդ $6^1/_2$ խ. ալիւր, 7 կարաս գինի, ձէթ՝ $8^1/_2$ լ., իւղ՝ $19^1/_2$ լ., բոխի՝ 2 կարաս, բրինձ՝ 30 լ., ընկոյզ՝ 1650 հատ, ընկոյզի միջուկ՝ $20^1/_2$ գր. անասուն մորթում են 32 հատ: Միաբանների զգեստ, շալ՝ 17 թոփ, թոփը՝ 3 ռ. 50 կ., $5^1/_2$ թոփ գանկոյ, գաղը՝ 17 կ., 23 գդակ, հատը՝ 1 ռ. 50 կ., 17 թոփ մահարվարի, թոփը՝ 5 ռ., 4 փ. սապոն, փութը՝ 4 ռ.:

Մենաստանն ունեցել է. 19 պղինձ, 8 գիւգիւմ, 5 խբրուղ-լագան[22], 9 չայտան, 8 սինի, 2 փլաւքամիչ, 2 քաֆկիր, 4 արիզարդան, 3 բատեայ, 3 լանգարիք, 11 ուրագ, 11 սղոց, 3 դուր, 3 չաքիւչ, 7 դնդան, 4 փուքս, տիկ, խնոցի, 48 եօրղան, 33 գոչակ, 50 բարձ, 24 խալիչայ, 16 կարպետ, 11 քէչայ:

Խաչ՝ 33, սկիհ՝ 4, բուրվառ՝ 5. քչոց՝ 4, ջահ՝ 5, կանթեղ՝ 3, Աւետարան՝ 6, Շարական՝ 21 եւ այլն:

Մենաստանը ունեցել է 112 ձեռագիր[23], 541 տպագիր գրքեր:

Այս թուին մենաստանի զգեստների խոբանը հրդեհ է ընկնում. այրում են, չուրջառ՝ 19, փորուրար՝ 10, ուրար՝ 5, չապիկ՝ 48, բազպան 8 զոյգ:

Միաբանութիւնը իրաւունք չունէր բամբակի կտորներից զգեստներ հագնելու, այդ տարին դիմում են եւ խնդրում սինոդին, որ թոյլ տրուի իրենց բամբակէ կտորներից զգեստներ հագնել. մի բան, որ վերջ ի վերջոյ սկսում է գործադրուել, մինչեւ անգամ մետաքսէ կտորը:

Միաբանները ժամանակի տրամադրութեան համաձայն փոփուկ կենցաղի են ձգտում, ուստի եւ 1857 թ.ին սինոդին յայտնում են, որ իրենց բնակարանները կղզու վերի մասում անյարմար է, ջուրը եւ նաւահանգիստը հեռու է, խնդրում են թոյլ տալ ցածում շինել սենեակներ եւ շինում է 16 սենեակ, 8ը մի կողմ, 8ը հակառակ կողմը, միացած մի ծածկուած միջանցքով: Ամէն միարան ունենում է 2 սենեակ, մէկը ճաշա. (?) միւսը ննջարան, մինչդեռ անապատականները միայն մի խուց ունէին, առանց կրակ վառելու էին ապրում: Ահա ինչպէս անապատականի կենցաղը դառնում է վանականի կենցաղ ու աշխարհահայեացքը՝ ձգտումը կոչման հասկցողութիւնը փոխում է: Այլ եւս հոգեկանը չէ Սեւանի միաբանի ուշադրութեան առարկան, այլ մարմնական հանգիստը:

Բաւական անախորժութիւնների, գրագրութիւնների ու պայքարի պատճառ են դառնում 1846 թուից Ռուսաստանից գաղթեցրած մօլականները, որոնք տեղաւորում են Ելենովկա, Ալէքսանդրովկա, Կոստանդինովկա, (Դարաչիչագ) Ն. Ախտա, Սուխոյ, Ֆոնտան գիւղերում, նպատակ ունենալով ռուսացումը արագացնել Կովկասում, եւ միւս կողմից ազատուել անհանգիստ տարերից երկրի ներսում: Յատկապէս Ելենովկայի մօլականները սկսում են մենաստանի հողերը դրաւել, այն տեղերում ջրաղաց շինել, որը վնասում է մենաստանի ջրաղացին: Մենաստանի վանահօր դիմումները սինոդին մեծ մասամբ մնում են անհետեւանք[24] Մալականները ստոիճանաբար դրաւումներ են անում եւ Սեւանայ մենաստանի վանահայրերը մինչեւ 1910ական թուականները միշտ էլ բողոքում են ու մնում անպատասխան: Այս պայքարը տնտեսական բաւական վնաս է տալիս անապատին եւ հայ գեղացուն եւս դրդում է նման վերաբերմունք ցոյց տալ դէպի մենաստանը:

1860 թ. Ելեւմուտքը.

Մնացորդ	1859 թուից	795 ռ. $94^1/_2$ կ.
Մուտք	1860 թուից	2584 ռ. 14 կ.
Ելք	1860 թուից	2386 ռ. $65^1/_2$ կ.

Արդիւնք Ցամաքարերդից՝ ցորեն 8 խ. 5 լ., գարի՝ 15 խ. $52^1/_2$ լ., հաճար 3 խ. $52^1/_2$ լ., կտաւատ 76 լ.: Գոմաձորից՝ ցորեն՝ 13 խ. 7 լ., գարի 23 խ. 50 լ. հաճար 4 խ. 3 լ., կտաւատ 40 լ.: Անասնեղէն ունի մենաստանը 76 գլուխ:

Ս. Նշանից արդիւնք. ցորեն՝ 20 խ. 99 լ., գարի՝ 6 խ. 22 լ.:

1861 թուից Նոր Բայազէտցիք եւ այլ գիւղականներ կազմում են վկայագիր, որ միջի ձկնատեղին (երբեմն կղզի եւ երբեմն թերակղզի, — Սեւանի պատկանող) եւ Ցամաքաբերդի առաջ գտնուող ձկնատեղին պատկանում է Սեւանայ մենաստանին, սկսած պարսից տիրապետութիւնից եւ այդ տեղերը կապալով է դրուում զանազան մարդկանց: Այդ կղզու խնդիրը վերջապէս որոշում է յօգուտ վանքի, Տփխիսի դատաստանական պալատի 1879 թ. Սեպտ. 28ի վճռով, որով 36 դեսեատին 1920 ք. ս. կղզին վանքին է տրւում:

Մենաստանը մինչեւ 1863 թիւը ձրի վառելափայտ է ստացել Դիլիճանի արքունի անտառից. այդ թուին սինոդը յայտնում է, թէ փոխարքայի դիւանատունը գրում է, որ ըստ օրէնքի ձրի կարող են ստանալ միայն շինութիւնների համար հարկաւոր եղած փայտը եւ ոչ նաեւ վառելափայտը: Այսպիսով մենաստանի եկամուտի մի աղբիւրը փակւում է. վառելափայտը այդ փայտազուրկ երկրում մեծ արժէք ունի, մանաւանդ Սեւանի կղզում, ուր 6—7 ամիս անընդհատ ձմեռ է. բուք ու բորան է, վառելիքի մեծ կարիք կայ: 70ական թուականների վերջում մենաստանի եկամուտն ու ծախսը հետեւեալ պատկերն ունէր:

Մնացորդ	76 թուից	957 ռ. $40^1/_2$ կ.
Մուտք	77 թուի	5487 ռ. 73 կ.
Ելք	77 թուի	4224 ռ. 36 կ.

Ցամաքաբերդից ստանում են՝ ցորեն՝ 14 խ. 4 լ., գարի՝ 9 խ. 90 լ., հաճար՝ 4 խ. 80 լ., Գոմաձորից՝ ցորեն՝ 8 խ. 50 լ., գարի 19 խ. 63 լ., հաճար՝ 2 խ. 69 լ., կտաւատ՝ 15 լ.:

Այս ամէնը գործադրւում է ըստ այսմ մօտ 20—25 միաբանի եւ 15—20 ծառայողների համար: Աւելացնենք եւ անասնեղէն՝ ոչխար, կով, մատակ, եղն եւ այլն. յիշատակենք այն, որ Գէորգ Դ. Կաթողիկոսը խստիւ պատուիրել էր սինոդի միջոցով վանքում առ հասարակ գինի եւ օղի չպահել եւ չպարապել վաճառականութեամբ եւ պարզ կը լինի, որ այդպիսի եկամուտներով, այդպիսի պատուէրներ ստացող մենաստանը այլ եւս անապատ չէր եւ ոչ էլ ճգնաւորներ կային այնտեղ, այլ պարզ վանքում ապրողներ, որոնք աշխարհիկանացել էին ժամանակի ոգու համաձայն:

Մենաստանը իւր հաշիւները պահելու համար գործ էր ածում սինոդից ուղարկուած հետեւեալ մատեանները. 1. Մուտքը եւ ծախսը գրելու, 2. Հաշուացուցակ եկեղեցական անօթից եւ զարդուց, 3. Հաշուացուցակ կայից անապատին Սեւանայ, 4. Պատճէնք գործունեայ թղթակցութեանց, ընդ որս են եւ հասարակ թղթագրութիւնք, 5. Ստացած թղթերի ցուցակ:

Ահա ի՛նչ ձեւական բիւրոկրատ միջոցներով խճողւում էր նախկին պարզ կենցաղը: Ժէ. դարու ճգնազգեաց անապատը. ի՛նչ անտեսական վիճակ ունէր, երբեմն չոր հաց ու ջուր գործածելով բաւականացող միաբանների մենաստանը: Մենաստանը դարձաւ մի ժամանակ էլ պատժատեղի, ուր աքսորում են վար բարքուվարքի տէր հոգեւորականներին եւ այնպէս էր մնաց գրեթէ մինչեւ մեր օրերը:

Մենաստանի բնոյթը փոխուէլն ի նկատի ունենալով Ներսէս Ե. Կաթողիկոսը 50ական թուականներից թոյլ տուեց նաեւ

1. Ցորէն՝	155 խ. 18 լ.	82 խ. 93 լ.	72 խ. 25 լ.	
2. Գարի	56 խ. 21 $^1/_2$ լ.	26 խ. 88 լ.	29 խ. 63 $^1/_2$ լ.	
3. Ալիւր՝	43 խ. 73 լ.	34 խ. 41 լ.	9 խ. 32 լ.	
4. Բրինձ՝	5 խ. 39 $^1/_2$ լ.	4 խ. 20 լ.	1 խ. 19 $^1/_2$ լ.	
5. Ջաւար՝	4 խ. 50 լ.	2 խ. 60 լ.	1 խ. 90 լ.	
6. Լոբի՝	1 խ. 6 $^1/_2$ լ.	— խ. 63 լ.	— խ. 43 $^1/_2$ լ.	
7. Իւղ՝	2 խ. 49 լ.	1 խ. 55 լ.	— խ. 94 լ.	
8. Պանիր՝	— խ. 57 $^1/_2$ լ.	— խ. 43 $^1/_2$ լ.	— խ. 14 լ.	
9. Սխտոր՝	— խ. 50 լ.	— խ. 35 լ.	— խ. 15 լ.	
10. Ոսպ՝	— խ. 32 $^1/_2$ լ.	— խ. 21 $^1/_2$ լ.	— խ. 11 լ.	
11. Գինի՝	4 կարաս	1 կարաս	3 կարաս	

[22] Անունները, ուղղագրութիւնը պահել եմ բնագրինը:

[23] Մանրամասն ցուցակը տես Գեղարքունի 128—129 եր.:

[24] Իբր ռուս պաշտօնկութեան վերաբերմունքի նմոյշ յիշեմ ի միջի այլոց, որ 1857 թ. Երեւանի նահանգապետի կինը, ուրախ է գալիս Սեւան, մի ձեռագիր աւետարան մի քանի օրով վերցնում է եւ այլ եւս չի վերադարձնում:

© National Library of Armenia

կանանց մուտքը մենաստան, մինչդեռ մինչ այդ կանայք մուտք չունէին։ Անշուշտ ԺԹ. դարու առաջին քառորդում նման կարգադրութիւն չէր լինի, քանի որ անապատը դեռ ունէր իւր բարոյական կրօնական արժէքները, ունէր մարդիկ, որոնք դեռ անապատին էին փարել եւ անապատի կանոնեբով էին ապրում։

Տնտեսական կեանքի հողը շուտ էր կլանել միաբանութեանը եւ մենաստանը զրեթէ դադարել էր զրաղէններ ունենալուց։ Հայոց հայրապետները տեսնում են այդ ու գիտակցում, մանաւանդ թէ ժամանակի մամուլի ձայնն էր յաճախ եւ ուժգին լսւում նրանց ականջին, որ եթէ վանքերը կրթարաններ, դպրոցներ չունենան բոլորովին կը չորնան ու կ'անհետանան։ Ուստի Մատթէոս Ա. Կաթողիկոսը 1864 թ. Յունուար 3ին թ. 3 գրութեամբ մենաստանի միաբանութեանը առաջարկում է իր ուղարկած մի տիրացուի հետ պարապել, իսկ եթէ մենաստանի մէջ կրթող չլինի, խոստանում է ինքն ուղարկել մի գրագէտ «առ ի կրթել զայս եւ զմիաբանութիւն ձեր յաղատական ուսմունս, ըստ որում եթէ ոք ոչ իմացի զաղատական արուեստս ոչ կարէ ի միտ առնուլ կամ իմանալ զմիտս սուրբ գրոց եւ լուսաւորել»։

Ուշագրաւ է այն նախ, որ երբեմնի ընթերցասիրութեամբ եւ գրքերով յայտնի մենաստանում ենթադրւում էր, որ մի գրագէտ իսկ չլինի, գրագէտ — ոչ ի հարկէ այրուբենն իմացող, այլ ժամանակի պարզ, տարրական գիտելիքները գիտցող։ Երկրորդ, որ «ազատ արուեստները» սկսում են ներմուծել նաեւ վանքերում։ այդ նշանակում է այն աշխարհիկ գիտութիւնները, որոնք ժամանակի ծիսական եկեղեցական դպրոցներում գործադրւում են։ Անապատն եւս իր դռները բանում է դրսի ուժի հոսանքի առաջ։ դուրսի կեանքը տարէցտարի աւելի ու աւելի նուաճումներ անում անապատում։

Սեւանում վանական դպրոց բանալ չի յաջողում չնայելով 1869 եւ 1876 թուերին արած փորձերին։ երբ վերջին անգամ Գէորգ Դ. Կաթողիկոսը ուղարկում է Եղիա Վ. Հասան-Ջալալեանին, որ Սեւանում ուսուցիչ լինի ամսական 20 ռ. ռոճիկով եւ տեղի դիպլիոնների հետ պարապէ հայերէնից, քերականութիւնից եւ քրիստոնէական վարդապետութիւնից։ Դիւանի գործերից երեւում է, որ վանահայրն ընդդիմադրում է այս կարգադրութեան իսկ, եւ միայն կաթողիկոսի սաստիկ հրամանից յետոյ հպատակում է։ 60ական թուականների վերջերում Սեւանայ անապատն այցելող Մեսրոպ Վ. Սմբատեանը այսպէս է բնորոշում անապատի միաբանութեան մտաւոր վիճակը։ «Ազատական արհեստը մեծ երկիւղիւ հեռու է փախել այս կղզուցս, ուր երբեմն փառաւոր աթոռ դրած բազմել էր վեհանձնութեամբ։

«Վարդապետք, սարկաւագունք եւ դպիրք, որք 20 էին թուով, միայն գիտեն հայերէն կարդալ եւ գրել, դպրոցական բ։ կամ գ։ կարգի աշակերտաց չափով՝ ուր է մի դասեան դպրոցի ուսումն, եւ այն ալ ոչ կանոնաւոր։ Յաւն այն էր, որ ամենեւին ոչ էր եւ փոյթ չունէին ուսումն ստանալու եւ հարկաւոր դէպքում ժողովրդին պիտոյանալոյ քարոզութեամբ եւ ուսուցչութեամբ ժամանակիս պէտքերու պահանջին համաձայն [25]»։

Նման ձեւի ակնարկ է անում նաեւ Սարգիս Եպ. Հասան-Ջալալեանը իւր ճանապարհորդութեան Բ. հատորում։ 50ական թուականների վերջերում ասելով։ «Եւ չկամիմ բամբասել զեղբարս իմ, սակայն ասեմ զճշմարիտն, քանզի տեսեալ իմ զրագմագրի պիտանի մատեանս ժողովեալս անդէն, մտեալս ընդ փոշի մոռացութեան, ի միտ բերի իսկոյն թէ մի գուցէ ժողովեալքն ասացն զդիւրութիւն անձանց եւեթ խընդրեն [26]»։

Ահա այս երկու ականատես սրտացաւ կրօնաւորները թախծով, վշտով տեսնում, ըմբռնում են, որ նախկին անապատը չկայ, որ ուսահայ կեանքը փոխուելիս, փոխուել են ժամանակի պահանջները, անապատն էլ փոխուել է մտաւորից տեսական կեանքի պաշտամունքին անցել։ հինը մոռացել է եւ նորից էլ հեռու է մնացել, ուստի եւ դարձել է իրենց անձի դիւրութեան մասին մտածողների մի պատահական ապաստանարան։

(Շարունակելի։) ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

[25] Գեղարքունի 126 եր։
[26] Սարգիս Եպ. Հ. Ջալալեան ճանապարհորդութիւն Բ. հատ. 108 եր։

ՎԻԵՆՆԱ, ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՅԿ ՍՍՌ
Ա. Մասիսյան
ՍՍՀՄ ԳԱ

ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ

ԱՄԲԵՆ. Տ. ԵՂԻԱԷ Ի Ս. ԱՐՔԵՊՍԿՊ. ՓՈՒՌՔԵԱՆ

1879-1929

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Ամեն. Դուրեան Սրբազան, զուտ հոգեւորական տեսակէտէն դիտելով, եղած է անլռելի Քարոզիչը Ս. Աւետարանին, տալով իր քարոզելու արուեստին օծութիւն մը ո՛չ միայն իմաստալից խօսքերով եւ բանաստեղծական խոյանքով, այլ եւ հայերէն լեզուին գրական գեղեցկութիւնով։ Գրագէտը, Բանաստեղծը, Իմաստասէրը, Աւետարանիչը միանալով հոգեւորական Դուրեանի մէջ՝ հանդիսացուցած են զինքն Հայց. Եկեղեցւոյ բեմին վրայ լաւագոյն քարոզիչներէն մէկը։ Իբրեւ բանաստեղծ իսկ միշտ Աւետարանը եւ Փրկչին կեանքը երգած է Դուրեան իր քերթուածներուն մէջ, ուր նոր ներշնչում եւ նոր արտայայտութիւններ առած են աւետարանական դէմքեր ու դրուագներ։ Ասկէ զատ Դուրեան Սրբազանի բեմին նկարագիրը եղած է միջակէն վե՛ր բարձրացնել ունկնդրութեան մակարդակը, եւ ասոր նպաստած են թէ՛ իր յարատեւ Քարոզչութիւնը եւ թէ՛ իր լուսաւորող ուսուցչութիւնը միեւնոյն ատեն, այնպէս որ Աւետարանը արտափայլած է շարունակ իր բեմին վրայ եւ իր գրչին տակ։

Անաղարտ հաւատարմութիւնը իր սրբազան կոչումին, զոր պահած է իր Քահանայութեան այս յիսուն տարիներուն մէջ, իր անձին շուրջ շինած է մաքուր հոգեւորականի համբաւը, եւ իր անշահասէր ոգին եւ նուիրեալ գործունէութիւնը հայ եկեղեցականի սքեմին տակ՝ եղած է զմայլելի եւ օրինակելի իրականութիւն մը, զինքը մօտէն ճանչցողներուն համար։

Ամեն. Դուրեան Սրբազանի Քահանայութիւնը այնպէս սերտիւ լծորդուած է իր Ուսուցչութեան հետ որ անկարելի է զատել մէկը միւսէն։

Իբրեւ Վարդապետ Հայց. Եկեղեցւոյ, Ան եղած է գերազանցապէս ուսուցիչն ու դաստիարակը, թէ՛ իր քահանայական ձեռնադրութենէն յառաջ եւ թէ՛ ետքը։ ուսուցիչը ինչպէս եկեղեցւոյ սրբազան բեմին, նոյնպէս դպրոցներու դասախօսական աթոռներուն վրայ, իբրեւ Քարոզիչ-Ուսուցիչ Պարտիզակի մէջ, իբրեւ Վերատեսուչ-Վանահայր Արմաշու Դպրեվանքին մէջ, իբրեւ Առաջնորդ-Ուսուցիչ Իզմիրի առաջնորդութեան միջոցին, իբրեւ նախկին Պատրիարք Կ. Պոլսի եւ Ուսուցիչ Կ. Պոլսի վարժարաններուն մէջ, եւ այժմ ալ իբրեւ Պատրիարք-Ուսուցիչ Երուսաղէմի պատրիարքական աթոռին վրայ։

Ժամանակակից հայ սերունդին մէջ բազմաթիւ անձեր, աշխարհական թէ եկեղեցական, իրենց մտաւոր եւ հոգեւոր զարգացումին եւ պատրաս-

© National Library of Armenia